ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ

Գերմանիայում գոյություն ունի մոտավորապես 3 միլիոնանոց թուրքական համայնք՝ ի հակակշիռ 40-42 հազարանոց հայկական համայնքի: Այդ համայնքները բոլորովին տարբեր խնդիրներ ու նպատակներ ունեն: Սակայն ժամանակ առ ժամանակ որոշ խնդիրներ նպաստում են թուրքական սփյուռքի մոբիլիզացմանը: Հայկական սփյուռքի նպատակներից մեկն է հասնել Հայոց Ցեղասպանության ճանաչմանը: Թուրքական սփյուռքի, այս դեպքում՝ Գերմանիայի թուրք համայնքի նպատակն այդ առումով հիմնովին հակառակն է:

Գերմանիայի թուրքական սփյուռքն իրենից ներկայացնում է 3 միլիոնանոց մի մեծ զանգված: Թուրքերը, Գերմանիայում ապրող այլ էթնիկ խմբերի համեմատ, ամենամեծ թիվն են կազմում:

Թուրքերն այս երկրում հայտնվեցին ոչ այնքան վաղ: 1961 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը /ԳԴՀ/, ելնելով աշխատուժի պակասից[1], աշխատանքային միգրացիայի մասին մի շարք համաձայնագրեր կնքեց Մարոկկոյի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Հունաստանի, ինչպես նաև 1961 թ. հոկտեմբերի 30-ին՝ Թուրքիայի հետ: Չնայած համաձայնագրում առկա մի շարք կետերի /այդ թվում՝ աշխատանքի թույլտվության առավելագույն երկարաձգումը չէր կարող գերազանցել 3 տարին, այդ ընթացքում թուրք ընտանիքները չէին կարող միավորվել /՝ գերմանական կառավարությունը գնաց զիջումների: Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ գերմանացի գործարարներին ձեռնտու չէր հրաժարվել փորձ ձեռք բերած, հմուտ աշխատողներից և ընդունել նոր խմբի, որի անդամները դեռ պետք է ձեռք բերեին այդ հմտությունները: Այդ զիջումը, իր հերթին, բերեց մեկ այլ փոփոխության՝ ընտանիքների միավորման հարցում:

Թուրքիայից եկած և Գերմանիայում բնակություն հաստատածների թիվը կազմում է 2 637 000 /2002 թ. տվյալների համաձայն/, որոնցից 1,764 հազարը Թուրքիայի Հանրապետության քաղաքացիներ են: Սրանցից 613 951 մարդ ծնվել է Գերմանիայում[2]: Բացի այդ, ամեն տարի ոչ լեգալ ճանապարհով Գերմանիա աշխատանքի են մեկնում մեծ թվով թուրքեր:

Կարևոր է տարբերակել նաև Թուրքիայից գաղթած քաղաքացիների էթնիկ ծագումը: Գաղթածների մեջ մեծ թիվ են կազմում քրդերը, որոնք իրենց

երբեք չեն իդենտիֆիկացնում /նույնականացնում/ թուրքերի հետ: Ավելին, նրանց ու թուրքերի միջև հստակ բաժանում կա, որը պայմանավորված է հայրենիքում քրդերի ճնշվածությամբ, թուրքական կառավարության հետ կոնֆլիկտային հարաբերություններով: Որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ Գերմանիայի քրդերի թիվը տատանվում է 500000 - 700000 միջև[3]:

Մշակութային մեծ տարբերությունը, կրոնական դավանանքը, լեզուն օգնում են թուրքական սփյուռքին հանդես գալու որպես միասնական և ասիմիլացման /ուծացման/ չհակված խումբ, պահպանել իր յուրահատկությունը:

Այդ համատեքստում զարմանալի չէ Գերմանիա կատարած իր այցի ընթացքում թուրք համայնքի մոտ 2000 անդամների հետ հանդիպման ժամանակ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի արտահայտած հետևյալ միտքը. «Ասիմիլացիան հանցագործություն է մարդկության դեմ»[4]:

Ինչ վերաբերվում է հայերին, ապա Գերմանիայում ապրող հայերի թիվը հասնում է 40-42 հազարի՝ համաձայն Գերմանական հայերի կենտրոնական խորհրդի տվյալների[5]: Հայերը հիմնականում ապրում են Քյոլնում և Դյուսելդորֆում: Նրանց 2/3-ը Գերմանիայի քաղաքացի է: Էթնիկ հայերի ճշգրիտ թվի բացակայության պատճառն այն է, որ նրանց մի մասը գաղթել է Լիբանանից, Թուրքիայից, Ուզբեկստանից և այլ երկրներից: Հայկական սփյուռքի առջև կանգնած խնդիրներից մեկը հայապահպանության խնդիրն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես հայերը, այնպես էլ գերմանացիները քրիստոնյա են՝ դա իրոք բարդ խնդիր է: Հայոց լեզվի պահպանումն էլ շատ բարդ է, քանի որ հայոց լեզվի ուսուցողական դասընթացների կազմակերպումը, մասնագետների սակավության պարագայում, լուրջ խնդիր է: Միակ հնարավորությունը՝ ՀՀ կառավարության՝ հայերենը հայրենիքում ուսանել ցանկացող ուսանողներին աջակցելու ծրագիրն է:

Գերմանիայում մշակութային միավորման խիստ կարևոր գործոն է Հայ Առաքելական Եկեղեցին, որի Գերմանական թեմը՝ հիմնադրված 1990 թ., գտնվում է Քյոլն քաղաքում: Սակայն այս դեպքում էլ մեծ խնդիր կա՝ կապված հոգևոր շինությունների կառուցման և քահանաների մեծ պակասի հետ:

Հայկական սփյուռքին միավորող և պահպանող կարևոր գործոն է շարունակում մնալ Հայոց Ցեղասպանության համաշխարհային ճանաչման նպատակը, տվյալ դեպքում՝ ԳԴՀ-ի կողմից: Ընդ որում՝ Գերմանիայի կողմից Հայկական Ցեղասպանությունը չճանաչելու պատճառները մի քանիսն են: Առաջինը՝ գերմանական կուսակցությունների շահերի առկայությունն է. այդ կուսակցությունները չեն ուզում գրգռել և կորցնել իրենց թուրք ընտրողներին, այդ իսկ պատճառով դեմ են Ցեղասպանության ճանաչմանը: Երկրորդ՝ Ցեղասպանության ճանաչումը կբերի Ցեղասպանության միջազգային հետազոտու-

թյունների, որն էլ, իր հերթին, կվկայի Օսմանյան կայսրությանը կայսերական Գերմանայի ցուցաբերած աջակցության մասին: Եվս մեկ պատճառ է հանդիսանում այն, որ Հրեական Ցեղասպանության ճանաչումից հետո գերմանացիների համար շատ դժվար է ընդունել ևս մեկ ցեղասպանություն, որի մասին տեղեկությունը պետք է ներառվի դպրոցական ծրագրերում: Սա ավելի շատ հոգեբանական բարդույթ է:

Հայոց Ցեղասպանության ճանաչման առումով գերմանական դիրքորոշումը հետևյալն է՝ ցեղասպանության ճանաչման կամ չճանաչման հարցը Հայաստանի ու Թուրքիայի երկկողմ հարաբերությունների գործն է:

Չնայած այդ ամենին՝ 2005 թ. հունիսի 15-ին գերմանական Բունդեստագը քննարկեց և ընդունեց փետրվարի 22-ին ԲԳՄ/ԲՍՄ խմբակցության կողմից առաջարկված հայերի ցեղասպանության մասին բանաձևը: Բունդեստագն ընդունեց 1915 թ. իրադարձությունները և դրանցում Թուրքիայի դերը դատապարտող բանաձև, ինչպես նաև կայսերական Գերմանիայի մեղքը 1,5 մլն հայերի մահվան մեջ: Բանաձևում «ցեղասպանություն» բառը կիրառվում է որպես ուրիշի խոսք. «Բռնի տեղահանությունների և զանգվածային սպանությունների զոհ դարձան, ըստ անկախ գիտնականների, ավելի քան 1 մլն հայեր: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների անդամներ հայերի աքսորը և ոչնչացումն անվանում են ցեղասպանություն»:[6]

Հատկանշական է թուրքական կազմակերպությունների գործունեությունը Ցեղասպանության ճանաչման դեմ: Թուրքական համայնքի մոբիլիզացման գործում Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը մեծ դեր չունի, քանի որ Գերմանիայի թուրքերը մեծ մասամբ սոցիալ-տնտեսական ցածր մակարդակ ունեն և զբաղված են օրվա հացի խնդիրը լուծելով: Ճիշտ է, Գերմանիայում արդեն կա մոտ 70000 թուրք ծեռներեց[7], որոնց մոտ աշխատում է մոտ 350000 մարդ, սակայն նրանց հայրենակիցների մեծ մասն այնպես էլ չի կարողանում հաջողության հասնել: Դա է պատճառը, որ թուրքական համայնքի մոբիլիզացման հիմնական հիմքը կրոնա-մշակութային է: Գերմանիայում գործում են հարյուրավոր իսլամական կազմակերպություններ, որտեղ թուրքերը կարող են ստանալ կրոնական կրթություն՝ թուրքերեն դասընթացներով: Կրոնական գործոնը նպաստել է մեծ թվով թուրքերի մարգինալացմանը, գերմանական հասարակությանը ինտեգրվելու անհաջողությանը: Սակայն դա չի նշանակում, որ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարելը ոչ մի կերպ ներգրավված չէ թուրքական համայնքի օրակարգի մեջ: Իրականում, ամեն տարի տեղի են ունենում որոշ միջոցառումներ, որոնք կազմակերպվում են հիմնականում 2005թ. Հայոց ցեղասպանության հետ կապված բանաձևի ընդունումից հետո: Եվ տարօրինակ չէ, որ այդ միջոցառումները տեղի են ունենում Թուրքիայի

կառավարության աջակցությամբ: Օրինակ, 2006 թ. սկսած՝ «Թալեաթ փաշա» գործողության շրջանակներում թուրք ազգայնականները կազմակերպում են ամենամյա ցույցեր Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ: Այսպես, 2006 թ. գարնանը կազմակերպած ցույցին մասնակցել է մոտ 2000 մարդ: «Թալեաթ փաշա» շարժման ղեկավարն է Հյուսիսային Կիպրոսի նախկին նախագահ Ռ. Դենքթաշը, որը Գերմանիայում հայտնվեց այդ շարժման գործողությունների ժամանակ: Այսինքն՝ կարելի է ասել, որ Հայոց Ցեղասպանության ճանաչման դեմ պայքարը հիմնականում լիցք ստացավ դրսից, այն է՝ Թուրքիայից: Կան մի շարք ադրբեջանական կազմակերպություններ, որոնց մոբիլիզացումը տեղի է ունենում հիմնականում հակահայ հողի վրա, դրանք մեծ ակտիվությամբ մասնակցում են թուրքական կազմակերպությունների հակահայկական ցույցերին: Միանշանակ է, որ նրանք նպատակ ունեն, ըստ ամենայնի, թուրքական համայնքում քարոզել իրենց սեփական օրակարգը, որտեղ ընդգրկված են, հիմնականում, Խոջալուի դեպքերը ցեղասպանություն անվանելու փորձերը, Հայաստանին ագրեսոր ներկայացնելն ու Ղարաբաղը Ադրբեջանին վերադարձնելը՝ ըստ իրենց հնարավորությունների:

Գերմանիայում օրեցօր մեծանում է Թուրքական սփյուռքի դերը քաղաքական, տնտեսական և մի շարք այլ ոլորտներում: Դրա վառ օրինակներից մեկն է Զեմ Օզդեմիրի՝ Գերմանիայի «Կանաչների միության» համանախագահ դառնալը անցած տարի: Ի դեպ, նույն Օզդեմիրն ընդունում է Հայոց Ցեղասպանության իրողության փաստը: Կան նաև մի շարք այլ կազմակերպություններ, որոնց նպատակն է Հայոց Ցեղասպանության ճանաչման հասնելը, որոնցից հարկ է նշել «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը, որը Հայոց Ցեղասպանության ճանաչման համար նույնիսկ ստորագրահավաք է կազմակերպել, որի ընթացքում հավաքվել է մոտ 16000 ստորագրություն[8]:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Գերմանիայում ապրող թուրք համայնքում Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը օրակարգային կարևոր տեղ չի զբաղեցնում, քանի որ՝ ա/ համայնքի անդամների մեծ մասը սոցիալ-տնտեսական բարդ կացության մեջ է, բ/ Գերմանիայում Հայոց Ցեղասպանության ճանաչումը խորհրդարանի օրակարգում չէ: Գերմանիայի թուրք համայնքի մեջ այդ հարցերով զբաղվող հիմնական շահագրգիռ կողմը Թուրքիան է, որի մի շարք կազմակերպություններ փորձում են Հայոց Ցեղասպանությունը ներկայացնել որպես սուտ: Դրա հետ մեկտեղ՝ հենց թուրք համայնքում կան անհատներ ու կազմակերպություններ, որոնք դեմ են Հայոց Ցեղասպանության հերքմանը և պայքարում են դրա դեմ:

Ինչ վերաբերում է հայկական համայնքին՝ քանի որ այն սակավաթիվ է, ապա ունի՝ ա/ ինքնությունը պահպանելու խնդիր, բ/ այնպիսի կշիռ չունի, որպեսզի պահանջի Ցեղասպանության ճանաչումը:

Մեր հետագա ուսումնասիրությունը պահանջում է գտնել նաև մի շարք հարցերի պատասխաններ. ի՞նչ դեր և նպատակներ ունեն քրդական և ալեվի համայնքները Գերմանիայում, ո՞րն է Գերմանիայի թուրքական համայնքի դերը՝ Թուրքիայի շահերն իր բնակության երկրում առաջ տանելու գործում:

Ծանոթագրություններ

[1] ԳԴՀ-ում 1961 թ. գործազուրկների թիվը կազմում էր 94856 մարդ, մինչդեռ ազատ աշխատատեղերը 572758 էին /տես՝ Н.С.Губанов, Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений Современная Турция: проблемы и решения, М., 2006, стр. 184/

[2] Ս. Սումլյոնցի, Գերմանիայի թուրք բնակչությունը՝ դանդաղ գործողության էթնիկական ռումբ, «21-րդ դար», թիվ 2/12/, 2006 թ., էջ. 50

[3] Eva Ustergaard-Nielsen, Transnational Politics: Turks and Kurds in Germany, New-York, 2003, p. 61

[4] Erdoğan's speech to German Turks, http://sheikyermami.com/2008/02/11/erdogan-in-germany-assimilation-is-a-crime-against-humanity/

[5] Գերմանական հայերի կենտրոնական խորհուրդ, http://www.zentralrat.org/

[6] Germany Parliament Resolution, Motion by the parliamentary groups of SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN and FDP, http://www.armenian-genocide.org/ Affirmation.339/current_category.7/affirmation_detail.html

[7] Թուրքիայի արտաքին գործերի նախարարություն, http://www.mfa.gov.tr/the-expatriate-turkish-citizens.en.mfa

[8] Գերմանիայում բնակվող 16 հազ. թուրք դեմ է Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը,http://www.panarmenian.net/arm/society/news/47755/ Գերմանիայում_բնակվող_16_հազ_թուրք_դեմ_է_Թուրքիայի_ժխտողական_քաղաքականությանը

Աղբյուրներ և գրականություն

1. Н.С.Губанов, Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений, Современная Турция: проблемы и решения, М., 2006
2. Ս. Սումլյոնցի, Գերմանիայի թուրք բնակչությունը՝ դանդաղ գործողության էթնիկական ռումբ, «21-րդ դար», թիվ 2/12/, 2006 թ «21-րդ Դար», թիվ 2/12/, Եր., 2006
3. Eva Ustergaard-Nielsen, Transnational Politics: Turks and Kurds in Germany, New-York, 2003
4. Erdoğan's speech to German Turks, http://sheikyermami.com/2008/02/11/erdogan-in-germany-assimilation-is-a-crime-against-humanity/
5. Գերմանական հայերի կենտրոնական խորհուրդ, http://www.zentralrat.org/
6. Germany Parliament Resolution, Motion by the parliamentary groups of SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN and FDP, http://www.armenian-genocide.org/Affirmation.339/current_category.7/affirmation_detail.html
7. Թուրքիայի արտաքին գործերի նախարարություն, http://www.mfa.gov.tr/the-expatriate-turkish-citizens.en.mfa
8. Գերմանիայում բնակվող 16 հազ. թուրք դեմ է Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը, http://www.panarmenian.net/arm/society/news/47755/Գերմանիայում_բնակվող_16_հազ_թուրք_դեմ_է_Թուրքիայի_ժխտողական_քաղաքականությանը